ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀՐԱՄԱՆ

27 հունիսի 2000 թվականի թիվ 82

«ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԿԱՐԳԻ» ՄԱՍԻՆ

Հաստատել «Ատենախոսության պաշտպանության համար անհրաժեշտ որակավորման քննությունների հանձնման կարգը»:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն կարգը սահմանվում է ՀՀ վարչապետի 1996 թվականի հուլիսի 12-ի հ. 410 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի կանոնադրության» 3 ե) կետի համաձայն

1. Որակավորման քննությունները գիտական աստիճանաշնորհման անբաժանելի մասն են, որոնց նպատակը հայցորդի՝ որպես ապագա գիտնականի մասնագիտական պատրաստվածության ստուգումն է:

Սահմանվում են որակավորման քննություններ մասնագիտությունից, փիլիսոփայությունից եւ օտար լեզվից, ինչպես նաեւ ստուգարք՝ ինֆորմատիկայից:

Որակավորման քննություններ հանձնում են այն անձինք, ովքեր ունեն բարձրագույն կրթության որակավորման հետեւյալ աստիճանները՝ դիպլոմավորված մասնագետ եւ մագիստրոս:

Քննությունը մասնագիտությունից հանձնվում է ատենախոսության թեմայի հաստատումից հետո:

2. Մասնագիտությունից քննությունը հանձնվում է այն գիտական հիմնարկներում, կազմակերպություններում եւ բուհերում (այսուհետեւ՝ հիմնարկներ), որոնք ունեն ԲՈՀ-ի թույլտվությունը:

Հիմնարկը ԲՈՀ է ներկայացնում մասնագիտական քննություն ընդունող հանձնաժողովի կազմը՝ հաստատման համար:

Հանձնաժողովը հաստատվում է հետեւյալ կազմով՝ նախագահ (գիտության դոկտոր) եւ 2-4 անդամներ (գիտության դոկտոր եւ թեկնածու): Մեկ անձը կարող է լինել երկուսից ոչ ավել հանձնաժողովների անդամ: Հանձնաժողովում կարող են ընդգրկվել գիտնականներ նաեւ այլ հիմնարկներից:

Քննությունը հանձնվում է այն մասնագիտությունից, որով հաստատվել է ատենախոսության թեման՝ ԲՈՀ-ի հաստատած ծրագրով:

Անհրաժեշտության դեպքում կազմվում է լրացուցիչ ծրագիր, որը պետք է ընդգրկի հայցորդի հետազոտությունների ոլորտը կամ գիտության տվյալ բնագավառի ընդհանուր մասնագիտական հարցեր: Լրացուցիչ ծրագիրը մշակվում է համապատասխան ամբիոնում (բաժնում, լաբորատորիայում) եւ հաստատվում է այն ԲՈՒՀ-ի (ֆակուլտետի), հիմնարկի գիտական խորհրդում, որտեղ ընդունվում է քննությունը:

Այն դեպքերում, երբ հայցորդի բարձրագույն կրթությունը չի համապատասխանում գիտության այն բնագավառին (ենթաբնագավառին), որով հաստատվել է ատենախոսության թեման, հայցորդը պետք է հանձնի քննություն ընդհանուր մասնագիտությունից:

3. Քննությունները փիլիսոփայությունից եւ օտար լեզվից, ինչպես նաեւ ստուգարքը ինֆորմատիկայից հանձնվում են այն գիտական հիմնարկներում, որոնք ունեն ԲՈՀ-ի թույլտվությունը:
Հիմնարկը ԲՈՀ է ներկայացնում քննություն ընդունող հանձնաժողովի կազմը՝ հաստատման համար:
Հանձնաժողովները հաստատվում են հետեւյալ կազմով՝ նախագահ (գիտության դոկտոր կամ թեկնածու) եւ 2-4 անդամներ:
Քննությունները եւ ստուգարքը հանձնվում են ԲՈՀ-ի հաստատած ծրագրերով:
4. Որակավորման քննությունները եւ ստուգարքը կազմակերպվում են տարեկան երկու քննաշրջաններով (մայիս-հունիս եւ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին):
Քննության եւ ստուգարքի ընթացքում յուրաքանչյուր հայցորդի համար լրացվում է արձանագրություն, որտեղ գրանցվում են քննական հարցերը եւ քննության վերջնական արդյունքը:
Որակավորման քննությունները գնահատվում են 4 բալային համակարգով՝ «գերազանց» , «լավ» , «բավարար» եւ «անբավարար»: Մասնագիտական քննությունը համարվում է հանձնված՝ «գերազանց» կամ «լավ» գնահատականի դեպքում:
Արձանագրությունը ստորագրում են քննական հանձնաժողովի նախագահը եւ անդամները:
Արձանագրությունները պահպանվում են քննություն եւ ստուգարք ընդունող հիմնարկներում:
Որակավորման քննության եւ ստուգարքի հանձնման մասին տեղեկանքը տալիս է քննություն, ստուգարք ընդունող հիմնարկը:
5. Որակավորման քննությունը կամ ստուգարքը չհանձնելու դեպքում հայցորդը կարող է այն հանձնել հաջորդ քննաշրջաններում:

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
«18» 07 2000 Թ.
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 30300065